

մութիւն ձեռակերտաց քոց, զօրացո զմեզ ընդ ամենազօր սուրբ և պատուական խաչիւ քոյ . զի քեզ վայելէ փառլք պատիւ և իշխանութիւն յաւիտեանս . ամէն :

Ներկայ Քնար:

Բ Ե Ր Ա 4

Ե՞ր նըւաղեալ առկախեալ կաս, աղեյարմար իմ քընար, Փոշիացեալ անձայն անխօս իբր անտերունչ եւ անլար .

Ոչ իմանաս զգաշնակութեանց այլոց զախորժ նըւագել,

Որք ըզպէսպէս քաղաքանւոյն հանդէս առնուն ի գովել :

Եհա լերինք բարձունք հովիտք եւ խորածորք ի գանգիւն ,

Պատասխանեն ձայնակցութեան նոցայն երգոց ի հընչիւն .

Լարկաջահոս անոյշ վըտակք մատրուակաց հեղասահ

Ո՞եծ զարմացմամբ անշարժ պազեալ յապուշ մընան կիսամահ .

Օ ի՞նչ այդ սլրսակն ըզքեւ փարեալ ծաղկափրթիթ անթառամ ,

Որ թըրթըրայ տերեւազարդ ի հողմն յուշիկ գամ քան զզամ ,

Դեղձան հերովք նորափետուր շողեալ ըզգլուխն եւ աւարտ .

Խընդրէ զքերթող իւր սեփհական երգ յօրինել գեղազարդ :

Օ արթիր զարթիր պերճ արշալոյս որ ի Շներա յայդ կանուխ Յարազըւարճ փըթթեալ բըրլովք մշտականաչ ջըրոց յաւղին .

Ի քաղցրաձայն գեր կաքաւչաց թըրխակատար սոխակաց

Խւ փետրազարդ արտակիտեալ յանգիւտ թըրչնոց երանգաց .

Օ զփին մարմանդք դալարագեղ մորճ ցորենոյն ալէկոծ ,

Ողկոյզք որթոց քաջ մըշակեալ լի նեկտարեան հիւթովք հոծ .

Ո՞յեն գառինք մատաղերամ յոյր փարախաց նորածին ,

Ի ձայն սրընգաց աղեխորով տըւարածիկ քաջ հովուխն .

Խնտառք քոյին գոկ ծաղկազարդ թանձրապաղարթ թաւաթուփ ,

Օ ով հովանեաւ ահեղաձայն հանեն դընդիւն հուպ ընդ հուսլ .

Ոստոց նոցին եւ խայտափիտ բունոց նըկարք տան հիացումն .

Ո՞յըք եւ փըրտուղք , բարտիք , մախելք , սարեկք , կաղնիք հաստաբուն ,

Դեղայարմար վեհ ծիածան ձըգեալ զերկնիւք երփներանդ ,

Ռազմազըւարճ չնորհեն հանգիստ եւ բազմարդիւն գործոց յանգ .

Ո՞յլք հրաշակերտ զոյդ զոյդ եղամիք ձունչեն զընան քառանիւ ,

Տոհմականօք պատշաճ բեռամիք բազմատեսակ յոքնաթիւ .

Վաջի մշակին երկք ծաւալեալ լընուն զերկիր համօրէն ,

1. Տեղոյս անունն՝ մեր ընթերցողաց շատին անծանօթ չէ . իսկ կերպարանքն՝ զարդարեալ քերդովն գեղշիկ փափագաւն և ախորժակաւ . որ և աւելի փափագելի կընէ մեզի քերդուածը կիսատուր չժողովը :

Ոյր ձեռընտու եւ օգնական ինքն ի բարձանց Աստուած լան :
| ուսածընունդ արփին լարեալ ի քոյդ ճակատ գերազանց ,
| ՞ ինչ աստեղօք մահիկ ցայգուն քայու քեզ անկեալ լուսապանձ :
|| Եղըր ծորեն յանթիւ ծաղկանց յուռթի հովտացըրդ խոխումք ,
| նուշահոտ եւ լուսալիր գիրգ գեղնորակ ընդ մոմովք .
| եռնադաշտակը քո յօրասցին դալարարօտ ի մարգ նոր ,
| Յորում ձիոց զոյգ զոյգ ծընունդք Ճարակին զօրըն բոլոր :
| Կարկաջասահ հոսին թափին վըտակը Ծըրոց քաղցրահամ
|| Ծտեալ ի տունս մաքրել ըզժահը հիւանդութեանց տարաժամ :
| Փողոցք քոյին կըրակակազարդք բարձրանիստ տամբք բազմատենչ
| Եր արուեստիք յանձանձիր ջանս յարակացեալ կան ի մէջ .
| Վզգ ազգ քանդակը գեղարուեստից առատաձիր յոլովեալ ,
| Հացիւ նաշչւով պայծառ իւղով անոյշ գինուով համբաւեալ .
| Օ ինու զարդու զգեցեալ պահակը զինուորք քոյին քաջարիք ,
| Շեմին ի քեզ պերճ եւ յալթող , գեղապատշաճ եւ փափկիիկ .
| Հանդիսատես քո հրապարակը զամն ընդ բոլոր որոտան ,
| Ե ձայն երգոց քնարաց թմբկաց թնդանօթից խառնաձայն :
| Այելքութեանց բազում կարգօք լըցեալ քո ծոց նազելի ,
| Աձառաշահ բեռամբք բազմօք պատուականօք լիուլի :
| Կաւք քո վարեալ փըքոցուոյց առագաստիւք ի հեռուստ
| Քափունս անկեալ բերեն վաճառըս բազմագանձ եւ հարուստ .
| Խորայատակ ծով ալետանջ եւ յարածուփ անսրիւալ
| Շաւիլ հորդէ տիւ եւ գիշեր ղեկավարին գալ ու երթալ :
• • • • • • • • • • •

Հ. ԱՐԻՍՏԱԿԵՍ Վ. ՃԻԶՄԵՃԵԱՆ

Տեսարան՝ Բնուրեան :

Բնութիւնն Աստուծմէ հաստատուած օրինաց բովանդակութիւնն է՝ իրաց գոյութեանն և էակաց յաջորդութեանն համար : Բնութիւնն՝ իր մը չէ , վասն զի այս իրս ամենայն ինչ կ'ըլլար . բնութիւնն էակ մը չէ , վասն զի այս էակս Աստուած կ'ըլլար . բայց կարելի է մտածել զբնութիւնն իրը կենդանի և անհուն կարողութիւն մը որ զամենայն ինչ կը բովանդակէ , զամենայն ինչ կը 1. Քաղեալ ՚ Պիւֆոնէ :

կենդանայնէ , և որ ընդկարգեալ առաջին Կակին կարողութեանը տակ՝ ըսկիզբն առած չէ գործելու առանց անոր հրամանին , և չգործեր ալ՝ եթէ ոչ անոր գործակցութեամբը կամ հաւնութեամբը : Այս կարողութիւնս՝ այն մասն է աստուածային կարողութեան , որ մեզի յայտնի կ'ըլլայ , միանգամայն պատճառ և արգասիք , եղանակ և գոյացութիւն , նկարագիր և գործք . բնութիւնն բոլորովին աննման է մարդկային արուեստին՝ որուն արտադրութիւններն մեռեալ գործք են , ու ինքնիրեն մը